ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

հայտնի է նաև որպես

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

www.coe.int/conventionviolence

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Ինչու՞ է մեզ պետք Ստամբուլի կոնվենցիան

Տարածված առասպելներ և թյուր պատկերացումներ

Այս փաստաթերթում ներկայացվում են Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) շուրջ շրջանառվող որոշ ընդհանուր առասպելները և թյուր պատկերացումները: ՔՀԿ-ներն այն կարող են օգտագործել իրենց հաղորդակցման/իրազեկման միջոցառումները կազմակերպելիս՝ ամրապնդելու կոնվենցիայի արժեքները, նպատակները և հիմնական դրույթները: Այս ցանկը սպառիչ չէ և ՔՀԿ-ները կարող են ներկայացնել Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ այլ առասպելներ և դրանք հերքելու հնարավորությունները: Կոնվենցիայի իրական նպատակները կարևորելու համար առասպելները հերքող յուրաքանչյուր փաստ պետք է համապատասխանեցվի ազգային համատեքստին, և առաջարկները ներկայացվեն շեղատառով: ՔՀԿ-ները կարող են օգտագործել այդ փաստերը գլխավոր ուղերձների հետ համատեղ՝ տարբեր հաղորդակցման հարթակներում տարածելու նպատակով, կամ Ստամբուլի կոնվենցիայի նպատակներն ու կարևորությունը ընդգծելու համար օգտագործելով որպես օժանդակ նյութ՝ որոշում կայացնողների հետ հանդիպումներում:

ԱՌԱՍՊԵԼ

Ստամբուլի կոնվենցիան Եվրոպայի կողմից պարտադրված օտար փաստաթուղթ է:

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիան համաձայնեցվել է Եվրոպայի խորհրդի 47 անդամ երկրի (այժմ՝ 46) արտգործնախարարների հետ՝ երկար քննարկումների արդյունքում, և այդ գործընթացում ներգրավված էին բոլոր երկրները:
2001 թվականին Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցությունից ի վեր, մեր երկիրն ակտիվորեն ներգրավված է կանոնադրական մարմինների, ինչպես նաև միջկառավարական համագործակցության մի շարք փորձագիտական հանձնաժողովների, այդ թվում՝ Գենդերային հավասարության հանձնաժողովի գործունեության շրջանակներում: Հայաստանը մասնակցել է Ստամբուլի կոնվենցիայի մշակմանը և ստորագրել այն 2018 թվականին՝ առանց արտաքին ճնշման՝ դառնալով Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի 45-րդ անդամ երկիրը:

ԱՌԱՍՊԵԼ

Ստամբուլի կոնվենցիան ազգային օրենսդրության մեջ ներմուծում է «գենդեր» հասկացությունը:

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիան օգնում է մեզ ավելի լավ ընկալել, որ կանանց նկատմամբ բռնությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Դրանք կապված են տղամարդկանց և կանանց ակնկալվող վարքից, այսինքն այն հանգամանքից, թե ինչն է համարվում ընդունելի տղամարդկանց համար, և ինչը՝ կանանց համար: Նման վերաբերմունքը կանխորոշում է մեր արձագանքը բռնությանը և ազդում մոտեցման վրա, թե ինչպես ենք մենք վերաբերվում կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը: «Գենդեր» եզրույթը սահմանում է տվյալ ընկալումները, և այդ իսկ պատճառով է գործածվում Ստամբուլի կոնվենցիայում: Դա չի նշանակում, որ ներպետական օրենսդրությունը և քաղաքականությունը պետք է սահմանեն այն, թեև փաստաթղթերը մշակելիս գենդերը պետք է հաշվի առնել:

«Գենդեր» տերմինը Հայաստանի օրենսդրությանը չհամապատասխանող կամ նոր տերմին չէ: Ազգային օրենսդրությունը սահմանում է «գենդերը» որպես «տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը»[1] :

Նմանապես, Ստամբուլի կոնվենցիայում «գենդեր» տերմինը վերաբերում է սոցիալական միջավայրում կերտված վարքագծին և դերերին, որոնք հասարակությունը հարմար է գտնում տղամարդկանց և կանանց համար: Կոնվենցիան ընդգծում է, որ կանանց նկատմամբ բռնությունը հիմված է գենդերային անհավասարության վրա, և որ կարծրատիպային գենդերային դերերը վնասակար են և կարող են հանգեցնել հանդուրժողականության՝ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ:

1 Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենք https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841.

ԱՌԱՍՊԵԼ

Ստամբուլի կոնվենցիան նպատակ ունի կարգավորել ընտանեկան կյանքը կամ ընտանիքի կառուցվածքը և հանգեցնում է ավանդական ընտանիքի փլուզման:

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիայի նպատակն է ապահովել ընտանիքների անվտանգությունը՝ պաշտպանելով կանանց և երեխաներին ընտանեկան բռնությունից, ինչպես նաև պաշտպանել կանանց և աղջիկներին, երբ նրանք իրենց ընտանիքում չեն: Կոնվենցիան չի անդրադառնում նրան, թե ինչպիսին է ընտանիքը: Կոնվենցիան կարևորում է այն, որ ընտանեկան բռնությունը և բռնության այլ ձևերը կանխվեն, կանայք և նրանց երեխաները պաշտպանված լինեն և ստանան աջակցություն, իսկ մեղավորները պատասխանատվության ենթարկվեն: Ստամբուլի կոնվենցիան նպատակ ունի վերջ դնել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերին: Այն նպաստում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը՝ իրավազորելով կանանց՝ տնօրինել իրենց կյանքը, ինքնուրույն ընտրություն կատարել և որոշումներ կայացնել՝ հենվելով համապարփակ շրջանակի վրա, որն 1) ընդգրկում է բոլոր տուժողներին պաշտպանելու և աջակցելու քաղաքականությունն ու միջոցառումները, 2) խթանում է միջազգային համագործակցությունը և 3) աջակցում է իրավապահ մարմինների և կանանց նկատմամբ բռնության հաղթահարման գործընթացում ներգրավված կազմակերպությունների միջև համագործակցությանը:
Ստամբուլի կոնվենցիան Հայաստանում ավանդական ընտանիքը ոչնչացնելու նպատակ չունի: Իրականում այն չի սահմանում ընտանիք հասկացությունը, չի ձգտում կարգավորել ընտանեկան կյանքը կամ առաջարկություններ անել ընտանիքի կառուցվածքի վերաբերյալ: Դրա նպատակն է կոտրել ընտանիքներում բռնության մասին լռությունը, որը տառապանք է պատճառել վերապրածներին, այդ թվում՝ երեխաներին: Ընտանիքների համար իրական սպառնալիքը հենց բռնությունն է, այլ ոչ թե միջոցառումները, որոնք նպատակ ունեն պաշտպանել և աջակցել բռնության ենթարկվածներին:

ԱՌԱՍՊԵԼ

Կոնվենցիան միտված է կանանց և տղամարդկանց միջև «տարբերությունների վերացմանը» և հերքում է այդ տարբերություն-ները:

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիան չի ձգտում չեզոքացնել կանանց և տղամարդկանց միջև տարբերությունները և չի ենթադրում, որ կանայք և տղամարդիկ նույնն են կամ նույնը պետք է լինեն: Այն ասում է, որ կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ: Կոնվենցիան հատուկ մշակված գործիք է՝ պաշտպանելու կանանց անվտանգ ապրելու իրավունքը:
2013 թվականին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը մեծապես հիմնված է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության մի շարք փաստաթղթերի վրա և որի նպատակն է ապահովել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները՝ քաղաքականության, պետական կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռներեցության, առողջապահության և կրթության ոլորտներում, ի թիվս այլ ոլորտների, համահունչ է կոնվենցիայի նպատակներին:

ԱՌԱՍՊԵԼ

Կոնվենցիան հակասում է ազգային կրոնական ավանդույթներին և կրոնին:

ՓԱՍՏ

Կոնվենցիան չի առնչվում կրոնին կամ համոզմունքներին: Այնտեղ ասվում է, որ մշակույթը, սովորույթները, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» չպետք է օգտագործվեն արդարացնելու համար բռնության որևէ գործողություն, օրինակ՝ կանանց սեռական օրգանների խեղում կամ հարկադիր ամուսնութուն: Ստամբուլի կոնվենցիան վավերացվել է ուժեղ կրոնական ավանդույթներ ունեցող մի շարք երկրների կողմից, այդ թվում՝ Սերբիայի, Հունաստանի, Կիպրոսի, Չեռնոգորիայի, Վրաստանի, Իսպանիայի, Սան Մարինոյի և Իտալիայի:
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդգծում է եկեղեցու և պետության տարանջատումը: Օրենքով սահմանված կարգով, հասարակության յուրաքանչյուր ոք երաշխավորված է արտահայտելու իր կրոնական համոզմունքներն, այնպես, ինչպես հասարակության յուրաքանչյուր ոք ունի անվտանգության և պաշտպանության իրավունք:

ԱՌԱՍՊԵԼ

Կոնվենցիան ազգային օրենսդրության մեջ ներմուծում է միասեռ ամուսնությունների հարցը, ինչպես նաև «սեռական կողմնորոշում» և «գենդերային ինքնություն» հասկացությունները:

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիան երաշխավորում է, որ իր ազդեցության տիրույթում գործառույթները կատարվեն առանց որևէ խտրականության՝ հիմված անձի գենդերային ինքնության կամ անձի սեռական կողմնորոշման վրա: Բռնությունից պաշտպանվելու հնարավորություն ունենալու համար չպետք է կարևորվի, թե ում եք սիրում: Շատ պետություններ, որոնք չեն ճանաչում միասեռ ամուսնությունները, արդեն վավերացրել են կոնվենցիան, այդ թվում՝ Ալբանիան, Բոսնիա և Հերցեգովինան, Վրաստանը, Լեհաստանը, Ռումինիան և Սերբիան:
Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում նշվում է, որ ամուսնությունը տղամարդու և կնոջ միությունն է: Կոնվենցիայի վավերացումը ճանապարհ չի հարթի միասեռ ամուսնություններն ազգային օրենսդրության մեջ ամրագրելու համար: Կոնվենցիան չի սահմանում սեռական կողմնորոշման նոր չափանիշներ կամ պահանջներ, ներառյալ միասեռ զույգերի օրինական ճանաչումը

ԱՌԱՍՊԵԼ

Կոնվենցիան պաշտպանում է միայն կանանց և նրանց է արտոնություններ տալիս:

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիան կենտրոնացած է կանանց և աղջիկների վրա, ընդ որում այն անդրադառնում է բռնության այն ձևերին, որոնցից միայն կանայք են տուժում (հղիության հարկադիր արհեստական ընդհատում, կանանց սեռական օրգանների խեղում) կամ որոնց կանայք շատ ավելի հաճախ են ենթարկվում, քան տղամարդիկ (սեռական բռնություն և բռնաբարություն, հետամտում, սեռական հետապնդում, ընտանեկան բռնություն, հարկադիր ամուսնություն, հարկադիր ամլացում): Միևնույն ժամանակ կոնվենցիան խրախուսում է իր դրույթների կիրառումը ընտանեկան բռնության ենթարկված բոլոր անձանց, այդ թվում՝ տղամարդկանց և երեխաների օգտին:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական տվյալները հաստատում են, որ ընտանեկան բռնության ենթարկվում են առավելապես կանայք: 2021 թվականի համազգային ուսումնասիրության ընթացքում կանանց գրեթե մեկ երրորդը (31.8%) հայտնել է, որ ենթարկվել է հոգեբանական բռնության ինտիմ զուգընկերոջ կողմից, յոթից մեկը (14.8%) հայտնել է ֆիզիկական բռնության մասին, տասնհինգից մեկը (6.6%) հայտնել է սեռական բռնության, իսկ մոտ մեկ երրորդը (29,2%)՝ տնտեսական բռնության մասին:[2]

ԱՌԱՍՊԵԼ

Կոնվենցիան խրախուսում է պետություններին միջամտել կրթական գործընթացին

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիան կրթությունը համարում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման կարևորագույն գործոն, քանի որ վերաբերմունքը, համոզմունքները և վարքագծի օրինաչափությունները ձևավորվում են շատ վաղ հասակից: Ուսուցումն այն մասին, որ տղաներն ու աղջիկները հավասար են և, որ նրանք պետք է ունենան հավասար հնարավորություններ, կարող է նպաստել բռնության տանող ապագա վարքագծի չեզոքացմանը: Միևնույն ժամանակ պետությունները իրավունք ունեն որոշելու, թե երբ և ինչպես լուծել տղամարդկանց և կանանց միջև հավասարության, փոխադարձ հարգանքի և բռնության հաղթահարման հարցերը, և երբ և ինչպես անդրադառնալ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայրում կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերին: Երեխաներին սովորեցնելը, թե ինչպես ահազանգել կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և հարկադրանքի մասին, երբ նրանք դրա ականատեսն են՝ դպրոցում, սոցիալական այլ միջավայրում կամ ընտանիքում, և դա մի քայլ է բռնությունից զերծ սերունդ կերտելու համար:

2 Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հետազոտություն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության, 2022, https://armstat.am/en/?nid=82&id=2487

Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարության ծրագրերը, որոնք ուղղված են աղջիկներին և տղաներին ուսուցանելու իրավահավասարության և բռնությունը հերքելու կարևորության մասին, համահունչ են կոնվենցիայի նպատակներին: Հայաստանի կառավարությունը 2008թ.-ին ներկայացրել է «Առողջ ապրելակերպ» դասընթացը հանրակրթական դպրոցների համար: Այս դասընթացը երեխաներին պատմում է գենդերային հարաբերությունների, գենդերային կարծրատիպերի, գենդերային հավասարության և բռնության կանխարգելման մասին: Կառավարությունն ընդլայնել է կրթական այս ծրագիրը:

ԱՌԱՍՊԵԼ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման մասին ներպետական օրենսդրությունն արդեն իսկ առկա է, ուստի Ստամբուլի կոնվենցիայի կարիք չկա:

ՓԱՍՏ

Ստամբուլի կոնվենցիան վավերացնող պետությունը հաստատում է բռնությունը դադարեցնելու իր հանձնառությունը՝ միանալով միջազգային իրավունքով կառավարվող համակարգին: Դա շատ ավելին է, քան զուտ օրենքների փոփոխությունը. դա նշանակում է իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերի միավորում, տվյալների հավաքագրում և հետազոտություն, տուժողների սպասարկման համար ֆինանսավորման ապահովում, աջակցության ծառայությունների խնդիրների լուծում, արդարադատության մատչելիության ապահովում, մասնագետների վերապատրաստում և բռնությունը դադարեցնելու ուղղությամբ այլ կարևոր քայլեր: Կոնվենցիան օգնում է կառավարություններին ճիշտ արձագանքել բոլոր կանանց և աղջիկների նակտմամբ բռնության բոլոր ձևերին, անկախ նրանից, թե ովքեր են նրանք և որտեղից են: Այն այլ երկրներում հաջողությամբ փորձարկված միջոցառումների համապարփակ ստուգաթերթ է: Կոնվենցիան հստակ ցույց է տալիս, որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունն այլևս չեն կարող դիտվել որպես մասնավոր խնդիր, և որ պետությունները չպետք է հանդուրժեն, այլ պարտավոր են միջոցներ ձեռնարկել բռնությունը կանխելու, տուժողներին պաշտպանելու և մեղավորներին պատժելու համար:

Վավերաց ներգրավվածության մասին: նելով կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետությունը հզոր ազդակ կուղղի միջազգային հանրությանը՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերին վերջ դնելու գործում իրԿոնվենցիայի վավերացումը կօգնի նաև ներառել ազգային օրենսդրության և պրակտիկայի ոլորտները, որոնք բարելավման կարիք ունեն, կապահովի պրակտիկայի և մոտեցումների կանոնավոր փոխանակում, արտաքին փորձագետների կողմից կտրամադրվեն ուղեցույցներ և առաջարկություններ՝ բռնության առավել արդյունավետ կանխարգելման, վերապրածների պաշտպանության և բռնարարների քրեական հետապնդման վերաբերյալ: «Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2017 թվականին, կարևոր քայլ է, սակայն օրենքը բավարար չէ կոնվենցիայի համապարփակ պահանջները կատարելու համար:

Այս փաստաթերթը գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի 16-օրյա միջոցառման տեքստի նախագծի հարմարցված տարբերակն է: Լրացուցիչ տեղեկությունների համար տես Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա)՝ **https://rm.coe.int/istanbul-convention-questions-and-answers/16808f0b80**

Սույն փաստաթերթը կազմվել է Կանայք ընդդեմ բռնության եվրոպական ցանցի (WAVE) կողմից, որպես Եվրոպայի խորհրդի գործիքակազմի մաս՝ Ստամբուլի կոնվենցիայի արժեքները, նպատակները և հիմնական դրույթները ամրապնդելու նպատակով հաղորդակցման/իրազեկման միջոցառումներ կազմակերպման համար: Հրապարակված նյութի բովանդակության համար պատասխանատու են բացառապես դրա հեղինակները և այն որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես Եվրոպայի խորհրդի կամ ՄԱԿ-Կանայք կառույցի պաշտոնական տեսակետերի արտացոլում: Հրապարակված նյութը մշակվել է Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցության և ՄԱԿ-Կանայք կառույցի հետ համագործակցության արդյունքում:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքային առաջատար իրավապաշտպան կազմակերպություն է: Այն ընդգրկում է 46 մասնակից պետություններ՝ ներառյալ Եվրամիության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որի նպատակն է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությունը:
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է կոնվենցիայի կիրարկումը մասնակից պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE